Ա. ՏԱՐԻ —.(7/20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1903. — ՌՈՒՍՉՈՒԿ).— Թիւ 17

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Հասցէ՝
Rédaction du journal
„VERADZNOUTIOUN"
ROUSTCHOUK (Bulgarie)

ԹԱԲԱԹԹԵՐԹ
ԱՄԷՆ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ
Տարեկան՝ 10 Քրանք, վեցամսեայ՝ 5 Քրանք։

Հասցէ՝
Редакция на вѣстникъ
„ВЕРАДЗНУТЮНЪ"
РУСЕ

ԲԱՑԱՏՐԵՆՔ

II.

Վերին աստիճանի բնորոշ են «Հանդէսի խմբի», այսպէս ասած՝ «քննադատութեան» եղանակները, ինչպէս արդէն տեսանք։ Անցուցակի կերպով առաջ բերենք մի նմուշ ևս։ Նա ասում է. — «Հնչակեան Կուսակցութիւնն, իր այս պաշտօնական անուամբ, թէև երբեմն որ և է յօդուածի մէջ պատահաբար կոչելով իրան նաև սոցիալիստ-յեղափոխական և վերջերս *) մինչև իսկ Մարքսիստ, եայլն։ Այդ «պատահաբարը» և «վերջերս» սքանչելի գոհարներ են այն խմբի բերանում, որ յայտարարում է, թէ արդէն «պէտք եղած չափերով» և «մանրամասն խօսել» է իր՝ այժմ անգոյ՝ հանդէսում Հնչակեան մամուլի և Կուսակցութեան մասին։ Այդ խումբը, ըստ երևոյթին, չէ կարողանում մարսել, թէ ի՞նչպէս իրանից առաջ, շա՞տ առաջ, եղել են մեզանում ուրիշներ, որ երևան են եկել հրապարակ սոցիալիստ, մարքսիստ անուանով ու համոզումներով։ Արդեօք նա ինքնախաբէութեա՞մբ է զբաղւած, թէ՞ ինչ-որ դափնիներ կան, որ նրա քունն են խանգարել։ Իսկապէս, դա հետաքրքիր էլ չէ մեզ համար։ Մեզ միայն մնում է մեր ուսերը վեր քաշելով, մտածել, որ կա՛մ այդ խումբը չէ թերթել իսկ «Հնչակը» սրա գոյութեան սկզբից իվեր, և կա՛մ... իրողութեան դէմ է մեղանչում գիտակցաբար։ Ցամենայն դէպս մի «խումբ», որ «պէտք եղած չափերով» արդէն «խօսել» է Հընչակեան մամուլի մասին, մի խումբ, որ խրոխտաբար սպառնում է ոմբակոծել այդ մամուլն ու նրա Կուսակցութիւնն «ընդարձակ քննադատութեամբ» ևս, պէտք չէր զօռի բան դարձնէր ուրիշի գլխին շառ գցելը և իրողութեան առաջ իրան կոյր ձևացնելը։ Եւ ահա իրողութիւնը։

Հէնց իր գոյութեան առաջին տարին, իր Ծրագիրը կազմելիս, «Հնչակն» իրա ուղղութիւնը պարզելև անուանել է իբրև սոցիալիստ-յեղափոխական և նրա կուսակցութիւնն էլ պաշտօնապէս կրել է «Հնչակեան սոցիալիստ-յեղափոխական Կուսակցութիւն» անունը։ Հէնց նոյն Ծրագիրը (հրատարակւած 1897 թ. իբրև երրորդ հրատ.), որի մասին յիշատակում է «խումբն» ինքը, իր հիմնական կէտերով մնացել է նոյն սոցիալիստ-յեղափոխականը և հէնց նոյն Ծրագրի Մեկնութիւններում Հընչակ. Կուսակցութիւնը ներկայանում է իբրև «սոցիալիստ-ռամկավարական» (սոցիալ-դեմո՛կրատական), իբրեւ «մարքսիստ»։ Հէնց նոյն այդ Մեկնութիւններն ուրիշ ոչինչ չեն, եթէ ո՛չ քաղւածքներ «Հնչակի» դեռ 1894 թ. համարներից, ինչպէս նշանակւած է արդէն նոյն իսկ Ծրագրում, և այդ քաղւածքները կրում են պաշտօնական նշանակութիւն. — գործածենք այդ «պաշտօնական» խօսքը, քանի որ այնքան սիրելի է «խմբին»։ Հէնց նոյն այդ Ծրագրից ենք քաղել նաև այն հատւածները, որ «վերջերս» Դրեսդեն «Վերածնութեան» N-o 11-ի առաջնորդողում։ Դրանք են իրողութիւնները, և մեր կողմից որ և է աւելի խօսքով բնորոշել «խմբի» «քննադատական» եզրակացութիւնները այլ ևս աւելորդ ենք համարում։

Անցնենք այժմ մի հիմնական խնդրի լուսաբանութեան։

«Հանդէսի խումբը» յայտարարում է, թէ «տաճկահայ սոցիալ-դեմոկրատիայի, երկրագործական պրոլէտարիատի և կենտրոնների սակաւաթիւ բանւորների», այսպէս ասած, «գործն ու միտքն չէ՛» կռիւ մղել «յեղաշրջելու տաճ՛ական ներկայ ռեժիմը» քաղաքական բարեկարգման համար և կամ ձգտելու ձեռք բերել հայկական անկախութիւն։ Այդ անհնարին գործն ու միտքն արհամարհանքով նա նետում է «հայ յեղափոխական կուսակցութիւնների» ուսին։ Այդ խրոխտ յայտարարութիւնն անելով հանդերձ, մի քանի տող վեր և ապա մի քանի տող վար նա ասում է տրամագծօրէն դրա հակառակը։ Նա յայտարարում է, որ տաճկահայ պրոլէտարիատը պէտք է «պահանջէ» քաղաքական ազատութիւններ (դա՝ մի քանի տող վեր), որ նա պէտք է «իր դասակարգային քաղաքական-տընտեսական պահանջների անունով կուռ պետութեան դէմ» (դա էլ՝ մի քանի տող վար)։ Հակասութիւնը սոսկալի է։ Նախ նա ասում է, թէ «յեղափոխական կուսակցութիւնների գործն է» կռիւ մղել «յեղաշրջելու տաճկական ներկայ ռեժիմը», բայց որ դա «սոցիալ-դեմոկրատիայի միսսիան չէ», և ապա մի և նոյն ժամանակ յայտարարում է, նաև, որ այդ վերջինս պէտք է «պահանջէ» քաղաքական ազատութիւններ և «կուռ պետութեան դէմ»։ Ուրեմն... Ուրեմն սոցիալ-դեմոկրատիան էլ մի «գործ» ունի, և այդ գործը, հէնց «Հանդէսի խմբի» ասելով, «կռիւն է պետութեան դէմ»։ Եւ թէև նա կցում է, թէ այդ կռիւը մղելու է «դասակարգային քաղաքական-տնտեսական պահանջների անունով» (ինչ լիովին ճիշդ է), բայց այդ կցորդական, պատմականապէս ճիշդ դրութիւնը, չէ բացասում — և ընդհակառակը՝ աւելի ամրապնդում է — այն յայտարարութիւնը, որ տաճկահայ սոցիալ-դեմոկրատիան էլ այսօր ունի «գործ ու միսսիա» և այդ գործը ու միսսիանա է հէնց ներկայումս «յեղաշրջել տաճկական ներկայ ռեժիմը», «կռուելով պետութեան դէմ»։ Այդ լինելով «Հանդէսի խմբի» խօսքն ու միտքը (որը նաև մեր խօսքն ու միտքն է), միանգամայն անհասկանալի ու հակասական է յայտնւում նրա միաժամանակեայ յայտարարութիւնը, թէ «տաճկահայ սոցիալ-դեմոկրատիայի միսսիան չէ՛» երկրի բարեկարգման ձգտել, «տաճկական ներկայ ռեժիմը յեղաշրջել»։ Եթէ դա նրա «միսսիան» չէ՛, նրա գործը չէ՛, այն ժամանակ ի՞նչ է նշանակում «կռուել պետութեան դէմ»։ Եթէ սոցիալ-դեմոկրատիայի գործը չէ «յեղաշրջել տաճկական ներկայ ռեժիմը», ձգտել երկրի բարեկարգման, հապա ինչպէ՞ս պէտք է նա «պահանջէ» այն քաղաքական ազատութիւնները, որոնք ձեռք բերելը «պրոլէտարիատի դասակարգային պատմական շահն է», որոնք նրա «քաղաքական պահանջներն» են ներկայումս և որոնց կարող է նա հասնել միայն յեղաշրջելով ներկայ ռեժիմը։ Այլ թէ գուցէ սոցիալ-դեմոկրատիան պէտք է ուրեմն, ըստ «Հանդէսի խմբի», մնայ ձեռնածա՞լ և «յեղափոխական կուսակցութիւններին» թողնէ վեհանձնաբար «կռուել պետութեան դէմ» ձեռք բերելու համար երկրի բարեկարգումները, այսինքն քաղաքական ազատութիւններ, որոնք սակայն անպայման «անհրաժեշտ» են սոցիալ-դեմոկրատիայի «նորմալ զարգացման» և ապագայ առաջխաղաց գործունէութեան համար։ Եւ այդ կռուում, որ հիմնական ու պատմական անհրաժեշտութիւն ու նշանակութիւն ունի պրոլէտարիատի շահերի տեսակէտից, սոցիալ-դեմոկրատիան պէտք է ուրեմն բաւականանայ «միայն որոշ աջակցութիւն ցոյց տալով յեղափոխական կուսակցութիւններին»։ Այդ «որոշ աջակցութիւն» խօսքը անկոչ և աժան կերպով նուիրաբերւած վեհանձնութեան գոհար է, անշուշտ, բայց սոցիալ-դեմոկրատիան քաղաքականապէս իրան կը սպանէ, եթէ այդ դիրքը բռնէ։ Այլ և ընդհակառակը, սոցիալ-դեմոկրատիայի պատմական միսսիան է և դասակարգային շահն ու գործը՝ հէնց ներկայումս «ձեռնարկող ու վարիչ հանդիսանալ» այն կռւի, որ մղւում է «պետութեան դէմ», որ ձգտում է «յեղաշրջել տաճկական ներկայ ռեժիմը» ձեռք բերելու համար քաղաքական ընդարձակ ազատութիւններ։ Սոցիալ-դեմոկրատիայի, իբրև որոշ դասակարգի, պարտականութիւնն ու միսսիան է զուտ ազգային «յեղափոխական կուսակցութիւններին» վրայ չը գցել այն «կռիւը պետութեան դէմ», որի ելքից է «խուսած» «սոցիալ-դեմոկրատիայի նորմալ զարգացումը» և նրա դասակարգային կռւի միջոցներն, աջողութիւնները, նրա առաջխաղացութեան անհրաժեշտ պայմանները։ Սոցիալ-դեմոկրատիայի պատմական շահն ու պահանջն է գրաւել քաղաքական կռւի հողը հէնց ներկայումս և լինել, եթէ ո՛չ բացառիկ, գէթ առաջաւոր յեղափոխական տարր ու մարմին և ղեկավարիչ միտք

*) Նոյը գրերը մերն են։

այդ քաղաքական կուսի, որ նա պէտք է մղէ յանուն իր պատմական դասակարգային շահերի։

Բայց... բանը նրանումն է, որ «Հանդէսի խմբիս գլխում խառնաշփոթութիւն կայ։ Նա կարծում է, որ սոցիալ-դեմոկրատիայի դասակարգային կռիւը բացասում է ներկայ քաղաքական պայքարը հայ յեղափոխական կուսակցութիւնների կողմից, և այդ պատճառով է, որ վեհանձնաբար ու արհամարհանքով սրանց ձեռքն է թողնում այդ քաղաքական կռիւը. մինչդեռ, միւս կողմից, հէնց այդ կռիւցն է, որ նոյն խումբը սպասում է շատ բան յօգուտ սոցիալ-դեմոկրատիայի զարգացման ու գործունէութեան։ Այդ հիմնական հակասութիւնը և դրանից բղխած այլ հակասութիւններն աղաղակիչ են։ Աւելի լաւ կը լինէր, ի հարկէ, ճիշդ մտածել, քան սխալներ անել՝ անպատճառ դուրսից երևալու համար։ Սակայն «Հանդէսի խմբին այդպէս չէ կարծում, ինչ շատ ցաւում ենք, և հէնց այդ պատճառով էլ այնքան խրտնում է ազգային անկախութիւն խօսքից ևս։

Բայց այդ խնդրի մասին յաջորդիւ։

ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

II.

Նախորդ յօդուածով խոստացանք քննութեան առնել այն հարցը, թէ արդեօք Կովկասում յեղափոխական շարժումներ սկսելով, թիւրքիայի հայ յեղափոխական գործը կարո՞ղ է տուժել նիւթականապէս, թէ ո՛չ։

Այդ հարցը լաւ պարզելու համար անհրաժեշտ է ուշադրութեան առնել՝ թէ մինչև օրս — այս ամբողջ 15 տարուայ հայկական յեղափոխական շարժումների ընթացքում — Կովկասը ո՞րչափ դրամ է տուել, ովքե՞ր են եղել գլխաւորապէս դրամ տուողները և մեր հարուստները, որոնց նուիրաբերութիւններն են որ իսկապէս այդ պիսի տան յեղափոխական գործին, — ե՞րբ, կամ ի՞նչ պարագաների մէջ են զիջանել փող տալու։ Այս հարցերի պատասխանը մենք հեշտութեամբ գտնում ենք մեր յեղափոխական երկու կազմակերպութիւնների օրգան եղող թերթերի — Հնչակի ու Դրօշակի — նուիրատուութեանց ցանկերի մէջ։ Ահա այդ ցանկերը մեզ պարզ կերպով ապացուցանում են նախ, որ Կովկասը չէ տուել այն, ինչ որ կարելի էր նրանից սպասել. նա չէ արդարացրել հայ յեղափոխականների ունեցած յոյսերի մէկ հարիւրերորդն անգամ։ Յետոյ՝ մենք այդ ցանկերից նոյնպէս պարզ տեսնում ենք, որ նուիրատուները գլխաւորաբար եղել են միշտ ոչ-հարուստները, մինչև իսկ ոչ միջակ հարստութեան տէր մարդիկ, այլ միշտ ու շարունակ օրավարձով ապրող բանուորները, արհեստաւորները, դրամատարները, մանր վաճառականները և ուսումնարանական աշակերտները։ Շատ պարզ է, որ որչափ էլ առատաձեռն լինեն այդ ազգաբնակչութեան նուիրաբերութիւնները, այդու ամենայնիւ նրանք չեն կարող այնպիսի մի պատկառելի դումար կազմել, որը կարողանայ ծանկահայաստանի յեղափոխական գործի անհրաժեշտ կարիքներին գէթ կիսով չափ բաւականութիւն տալ։

Եւ վերջապէս մենք վերոյիշեալ ցանկերից տեսնում ենք, որ Կովկասի հարուստները ամբողջ 15 տարուայ ընթացքում երկու անգամ են միայն տրամադրութիւն ցոյց տուել հայկական յեղափոխութեանը օգնելու. մէկ Դումգափուի անդրանիկ յեղափոխական ցոյցից յետոյ 1890 թուականին, երբ ամբողջ հայութիւնը միանգամից ցնցուեց և ամենքն էլ կարծեցին, նամանաւանդ հեշտամիջոցով դրամ վաստակելու սովորած հայ բուրժուազիան, թէ մի երկու այդպիսի ցոյց ևս՝ և ահա 500 տարի գերութեան մէջ կաշկանդուած Հայաստանը պիտի ազատուի ամենաչնչին զոհողութիւններով։ Եւ երկրորդ, 1894 թ. Սասունի դէպքերից յետոյ, երբ ամբողջ Եւրոպան ցնցուեց և հայկական խնդրի լուծումը իսկապէս օրուան հարց էր դառել։ Ինչպէս տեսնում ենք, այդ երկու անգամն էլ Կովկասի հայ բուրժուազիան սկսեց համակրութիւն ցոյց տալ դէպի հայկական յեղափոխութիւնը այն մոմենտներին միայն, երբ նա կատարելապէս համոզուած էր գործի շտապոյթի և բարեյաջող ելք ունենալու մէջ, և երբ նա նոյնպէս ոչ պակաս համոզուած էր, թէ Ռուսաց կառավարութիւնը նոյնպէս համակիր է Հայաստանի ազատութեանը և այդ համակրութեան շնորհով իրենց ազգասիրական բարեգործութիւնը կարող էր անպտուղ անցնել։ Այլ խօսքով, Կովկասի հայ բուրժուազիան Հայաստանի ազատութեան գործը համարում է ո՛չ թէ մի անհրաժեշտ ազգային պահանջ, որին պիտի ձգտել ամբողջ էութեամբ և որի համար պիտի զոհել ո՛չ թէ մի քանի գրոշներ այլ կեանքն անգամ, այլ իբրև մի սովորական բարեգործական և «թասիբիա» գործ։ Բուրժուազիան ընդհանրապէս ոչինչ չէ անում առանց շահադիտական նպատակների և նա իր ստանալիք շահի համեմատութեան չափով է միայն զոհողութիւններ անում։ Կովկասի հայ բուրժուազիան իր ազգութեան և կարճատեսութեան շնորհիւ անկարող է հաշուի առնել այն հեռաւոր օգուտները, որ նա կարող է ստանալ ապագայում ազատուած Հայաստանում, իսկ անմիջական շօշափելի և ա՛չ մի շահ նա չէ տեսնում այդ խնդրում, բացի, գուցէ, ազգասիրական փառասիրութիւնից, որը սակայն բուրժուազիայի համար ոչ մի տոկոս չը բերող դատարկ բան է համարւում։

Այս ձևով և միմիայն այս ձևով ենք մենք բացատրում Կովկասի հարուստների անտարբերութիւնը դէպի հայկական յեղափոխութիւնը։ Եւ քանի որ այդպէս է, ի՞նչպէս կարելի է ասել, որ այդ հարուստի օժանդակութիւնը յեղափոխին, նրա մի որևէ բարեգործական նպատակով արած նուիրատուութեան սահմանից անցնի։ Բայց ի՞նչ ենք ասում. Կովկասի հարուստներից նոյնիսկ այս վերջին տարիներում այնպիսիները եղան, որոնք միանգամից մի քանի հարիւր հազարներ նուիրեցին այս կամ այն բարեգործական նպատակով. մինչդեռ եթէ բոլոր հարուստների յեղ. գործի համար տուածները իրի գումարենք, մէկ հարիւր հազարի էլ չէ կարող հասնել։ Իսկ ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ հարիւր հազար ռուբլին, այնպիսի մի գործի համար, որտեղ միլիոնների կարիք կայ։ Եւ այդ նշանակութիւն չունեցող գումարից զրկուելո՞ւց են վախենում այն պարոնները, որոնք հակառակ են Կովկասի յեղ. շարժումների մասնակցելուն։ Չը պէտք է մոռանալ և այս, որ մենք ասացինք, թէ Կովկասի հարուստները սկսեցին յեղ. գործին փոքրի շատէ օժանդակութիւն ցոյց տալ այն ժամանակներում միայն, երբ նրանք կատարելապէս համոզուած էին հայկական խնդրի բարեյաջող և մօտալուտ լուծման մէջ։ Իսկ այն օրուանից յետոյ, երբ ակնյայտնի դարձաւ թէ Ռուսաց կառավարութիւնը ոչ միայն դէմ է հայ ազգի ձգտումներին, այլ և ամենայն ուժ կառավարութեանը բնաջինջ անել հայերին, միամտութիւն չէ՞ Կովկասի հարուստներից շօշափելի օժանդակութիւն սպասել։

Թիֆլիս Թորոս

(Շարունակելի)

ԲԱՆԱՎԻՐԱԿԱՆ 16

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ԳՔԷ ԼՅՕՔ-ի

թարգմանեց Ջրանսերեանէ

Ա. Տ–եան

ԻՇԽԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Եթէ իշխանութեան ծայրահեղ կեդրոնացումը հետեւանք ըլլար սոցիալիստական յեղափոխութեան, անիշխանականութիւնը կրնար ատոր հակակշիռ մը ըլլալ։ Բայց դաշնակցականութեան եւ ապակեդրոնացման լայն կիրառումով եւ կրկնուող խիստ քննիչներով, իշխանականները մեր հակառակորդներու ըսածէն նուազ երկիւղալի են եւ իշխանութիւնը, ամէն պարագայի մէջ, նուազ դժնդակ եւ բռնապետական՝ քան այսօրուանը։

Յետոյ ամէն կերպով պարզ պիտի ըլլայ որ ինչ որ այսօր ձեռք կը բերուի ուժով, աւելի լաւ կարելի է ձեռք բերել ազատութեամբ։ Առաջ կը կարծէին ուղղել խելագարները՝ զանոնք շղթայի զարնելով, կրթել տղաքը՝ մարմնական պատիժներու միջոցով եւ հնարաւոր ջնել ամուսնութիւնը՝ միայն կնոջ դերութեամբ։

Ազատութեան սկզբունքներու լայն կիրառումով մը ո՞րքան բարեփոխումներ կարելի է յառաջ բերել այս բոլորին մէջ։

Նոյնիսկ այսօր ուժին փոխարինած են գործովալի խորհուրդները եւ մարդավայել վարմունքները։ Պնդել ազատութեան օգտակարութեան վրայ. անա՛ բոլոր լուրջ անիշխանականներու գեղեցիկ եւ փրկաւէտ գործը։

Շատ մարդիկ փոխանակ ինքնիրենին գործելու, կըսպասեն ուրիշի օգնութեան։ Ասանկներուն մէջ պէտք է խրախուսել անհատական գործունէութիւնը։ Թէեւ գործակցութիւնը, ընդհանուր գործունէութիւնը վերջին հաշուով լաւագոյն միջոցն է նպատակին հասնելու, սակայն յաճախ մասնաւոր ձեռներէցութիւնը կրնայ իրական արդիւնքներ տալ։

Ինչոր կրնայ նպաստել անհատի զարգացման՝ առանց վնասելու հաւասարութեան, պէտք է եռանդով պաշտպանուի։ Այրած ածուխները լաւ կրակ չեն տար։ Կամքէ զուրկ մարդիկ համոզումներու կրակը չեն ունենար։ Մեր ցեղին ապագային համար թող չանան զգուշութեամբ արգիլել ինչ որ կրնայ նուաստացնել, պզտիկցնել անհատը, թող խորտակեն բոլոր անօգուտ կապերը։ Եռանդոտ ժողովուրդը չի կրնար բաղկանալ երկչոտ ոգիներէ եւ ապականուած թզուկներէ։ Թող աշխատին զարգացնել իւրաքանչիւր անհատի մէջ անոր ունեցած ուժը, անկախութիւնը, ինքնուրոյնութիւնը ու անձնականութիւնը, ինչ որ շատ քիչերուն՝ քով չեշտուած է այսօր։

Թող նպաստեն այն բոլոր ձգտումներուն, որոնք կը միտին դէպի մարմնային եւ բարոյական զարգացումը, որպէսզի օր մը մեր երկրագունտը բնակուի բարձր բարոյականի տէր եւ զօրեղ մարդկային ցեղով մը։ Սոցիալիստական ընկերութեան մէջ, ուր ստացուածի անհաւասարութիւնը, — մոլութիւններու այդ գլխաւոր աղբիւրը — դէպի չարը հակումը եւ մոլորութիւնը նուազած պիտի ըլլան, անհատի ազատութիւնը պիտի հասնի մինչեւ հիմայ անծանօթ եղող բարձրութեան։

Մարդկութեան եւ սիրոյ օրէնքով միայն սահմանաւորուած ազատութեան սկզբունքը երթալով աւելի քիչ առիթ պիտի տայ եպերելի արարքներու, չափազանցութիւններու, եւ այդ ա՛յնքան շուտ՝ որքան անհատական զարգացումը յառաջդիմէ։ Անհատներու վարմունքը, անոնց գործերը եւ նոյնիսկ հակումները պիտի որոշեն պետութեան միջամտութեան սահմանները։ Սակայն — որքան ալ այդ մեղի համար ցաւալի ըլլայ — բացարձակ ազատութիւնը գարձեալ անմատչելի պիտի մնայ, ինչպէս՝ անմահութիւնը։ Ուրեմն, անհրաժեշտ է գոյութիւնը իշխանութեան մը, որ հակէ հասարակութեան իրաւունքներուն եւ ամենուն ազատութեան վրայ։

Թէեւ մենք կը մնդունինք անիշխանական խելացի քննադատութեան մը օգտակարութիւնը, սակայն իրենց պահանջները կը գտնենք անհեթեթ ու վնասակար՝ բաղաքական շրջանակի մէջ, եւ անիրականալի՝ տնտեսական հողի վրայ։

(Շարունակելի)

«ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ»... ՎԱՐԴԵՆ ԳԼԽՈՒՆ ՄԷՋ։

(Շար. եւ վերջ)

Ինչպէս որ կը տեսնուի վերի քաղուածքէն, սոցիալիզմը ծայրէ ի ծայր գիտական է, բայց Վարդօն «որոշապէս» չի կրնար ըսել ասիկա, որովհետեւ ասանկ բաներ կարդալու «որամադրութիւնը» և դատելու կարողութիւնը կորսնցուցած է։

Ակէ յետոյ, պ. Վարդօ, պիտի յանդգնի՞ք ըսել թէ այս «մըտքերը մեզ շատ վաղուց յայտնի են»։

Բայց ուրկէ՞ ծագեր է այս կասկածը՝ սոցիալիզմի «համակիրը» Վարդօի գլխուն մէջ, և զայն՝ երկու աթոռի վրայ նստած ծիծաղաշարժ դրութեան մէջ ձգեր է։ Կերևի թէ սարսափեր է «դոյութիւն ունեցող անիշխանական վարդապետութենէն» և չկրնալով անոր ծագումն ու էութիւնը մեկնել՝ կուզէ անոր փարիլ։ Մենք պիտի ըսենք թէ ճիշտ տեղը գտեր է, որովհետև հոն մարդիկ «մէջերիան» և գործնականը (?) իրար հետ զուգորդող հերոսներն են։ Բայց չի կրնար վճռական քայլ մը առնել, որովհետև «ո՞վ կարող է երաշխաւորել թէ ապագայում էլ սոցիալիզմը անիշխանութեան հանդէպ այն դիրքը չպիտի ունենայ, ինչ որ ունի այսօր բուրժուազական լիբերալիզմը սոցիալիզմի հանդէպ»։ Ինչպէս կը տեսնէք, վարանումէ վարանում, կասկածէ կասկած։ Դարձեալ հայ սոցիալիստները պէտք է որ զանիկա դուրս հանեն զգաստարներու՝ այս քաստէն։

Նախ ըսենք, որ եթէ խնդիրը սոցիալիստական ապագայի մասին է, այդ արդէն բոլորովին անկարևոր է, որովհետև սոցիալիստական հասարակութեան մէջ գոյութիւն չպիտի ունենան ո՛չ սոցիալիզմ, ո՛չ անարխիզմ, քանի որ, անոնք՝ իբր արդիւնք արդի պայմաններու՝ պիտի ոչնչանան այս վերջիններուն ջնջումովը։ Բայց, ինչպէս ըսինք, Վարդօն դատելու կարողութիւնը կորսնցուցած է որ վերոյիշեալի նման հարց կուտայ։ Իսկ եթէ Վարդօն կը հետաքրքրուի դիտնալ սոցիալիզմի դիրքը դէպի անիշխանութիւնը, մենք կը ստանձնենք անոր բացատրելու այս կէտը յաջորդիւ։

S. Boräts

ԿԱՐՍԻ ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ

(Շարունակութիւն եւ վերջ)

Ոստիկանապետի խնդիրքով նահանգապետը հեռագրով դիմում է Կովկասի կառավարչապետ յայտնի հայակեր Գալիցինին՝ խնդրելով բարձրագոյն իրաւունք ստանալ Կարսը յայտարարելու պատերազմական դրութեան մէջ և իրաւունք տալ իրեն ամենաշընչին կասկածների հիման վրայ իսկ՝ աքսորել, բանտարկել հայերին, իսկ հայ պաշտօնեաներին բոլորովին հեռացնել ծառայութիւնից... (назначитъ усиленную охрану города Карса)։ Այդ իրաւունքը անմիջապէս ձեռք բերելուց յետոյ, Կարսի տպարանում տպում են յայտարարութիւնները ժողովրդի մէջ տարածելու համար. և մի նոր տուն են վարձում նոր հայ բանտարկեալների համար... որովհետև այն աշարկու շինութիւնը, որ ընդամենը երկու տարի առաջ է աւարտուել՝ բաւականութիւն չէ տալիս իրանց պահանջներին։ Ոստիկանապետվրացին իր պատրօն նահանգապետի հետ խաղաղ Կարսը ուզում են դարձնել Սոդոմ–Գոմոր և այդպէս ներկայացնել Բարձրագոյն իշխանութեանը, որը ոչ մի բանից տեղեկութիւն չունի, քանի որ իր ստորադրեալ կառավարիչները կը լինեն Խերիսեղիձեի պէս հայատեաց, տգէտ, և որ ամենագլխաւորն է, խեղճ մարդիկ և նահանգապետի նման (գարձեալ մի նախկին հասարակ պրիստաւ) զառամեալ ծերունիներ, որոնք խաղալիք են դառնում իրենց անխիղճ ու անսիրտ «գօկլասչիկներին» ու «գօնոսչիկներին» ձեռքում....։ Այսպիսի կրիտիքական օրերում նահանգապետի դիւանատան կառավարչի պաշտօնը վարում է մի անընշան մահմեդական–սինոնի օս, որը 14 տարուայ ընթացքում ամենահասարակ գրագրի պաշտօնից և տարբական ուսումով եկել հասել է այդ բարձր և միանգամայն պատասխանատու պաշտօնին։ Այդ մարդը պարսիկ կառավարչից «ետոյ մնծ դեր է խաղում մեր՝ հայերիս վերաբերմամբ կառավարութեան մէջ, որովհետև ինքը վերին աստիճանի հայատեաց լինելով՝ նահանգապետի վրայ ունեցած իր ազդեցութեամբ կարողացել է հայ տարրը ներկայացնել իբրև վնասակար և վտանգաւոր մի տարր....։

Մինչև այժմ մեր ամենակարող լրտեսներն ու մատնիչները վարձատրվում էին երբեմն ոստիկանական կառավարութիւնից, երբեմն էլ ժանդարմների մեծաւորից. իսկ այժմ մեր ոստիկանապետը լրբաբար խնդրում է նահանգապետից միջնորդել կառավարչապետի մօտ, որպէսզի մի խոշոր գումար յատկացուի իւրաքանչիւր տարի գաղտնի լրտեսներին և մատնիչներին վարձատրելու համար։ Մատնիչները ուղղակի հրաշքներ են գործում. նրանք ազգասէր և հայրենասէր ձևանալով ձեռք են բերում «բուն աղբիւրից» ստոյգ տեղեկութիւններ — նոյնիսկ բոլոր յեղափոխական թերթերը —, և հաղորդում դիժ Միխակոյին ու ժանդարմներին, որոնք և հիմնուելով այդ ցածհոգի մարդուկների ստոր ու մռայլ տեղեկութիւնների վրայ՝ խուզարկութիւններ են կատարում հայերի տներում և տակը ու վրայ անում բոլոր իրեղէնները, շորերը, յատակը և պատերը՝ ինչ որ կասկածելի բան գտնելու յոյսով...։ Շատ անգամ էլ պատահել է (զոհերն են պատմում) որ նրանք հետները տարած այս կամ այն յեղափոխական թերթը գտում են, խուզարկութեան ժամանակ, մի ո՛ր եւ է տեղ կամ բանի մէջ, և յանկարծ «գտնելով» ահագին գոռում–գոչումով կալանաւորում և բանտ են առաջնորդում անմեղ տանտերերին....։

Կարս Հովսեպակ Դիլմաքեան

ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

II.

(Շարունակութիւն)

«Ցիրաւի, այսօր, ո՛ր լրագիրը առնէք հազուագէպ բացառութեամբ պիտի նկատէք որ ամենաչ «կը պնդեն» թէ՝ հայ կեանքի մէջ գոյութիւն չունին դասակարգային հակասութիւններ, դասակարգային կռիւ, թէ՝ կան միայն ընդհանուր շահեր, ընդհանուր գործ, թէ՝ հայկական իրականութեան մէջ չկայ նիւթական հակասող շահերու ընդհարում և այլն։ Այդ «պնդողները» անզօր են ըմբռնելու հայկական իրականութեան տեսակետը, հասկնալու հայ ժողովրդի ծոցին մէջ կատարուող այն հասարակա–տընտեսական քայքայիչ բրօցէսը, որ երևան կուգայ մեր ամենօրեայ կեանքին բոլոր արտայայտութիւններու մէջ, մանաւանդ վերջին տարիներս։ Անշօր են, կըսենք, հասկնալու այն բրօցէսը, որ «ստակօրէն որոշուած երկու ուղղութիւն ունի, որոնք սակայն միշտ զուգահեռաբար չեն յառաջանար. մէկ կողմէն, ապրուստի հին կերպերու և անոնց հետ սերտ կապուած բարքերու ու սովորութիւններու արագ ոչնչացումը, տարբերուն» զանգուածային ջարդը եւ Պուլկարիոյ ու Թուրքիոյ միջեւ պատերազմ մը՝ ամենէն ազգու եւ կրքուկ միջոցներն են այսօր Թուրքիոյ ամբողջութիւնը ու Պալքաններու խաղաղութիւնը պահպանելու համար։ Եթէ այս պատերազմին մէջ Թուրքիա յաղթէ, այդ սեւելի լաւ։ Այն ատեն Պուլկարիոյ վրայ պիտի ծանրանան այնպիսի պատերազմական տուգանքներ, որ անիկա մնանպամ ընդ միշտ ետ պիտի կենայ ամէն տեսակ նուաճողական ձգտումներէ Մակեդոնիոյ մէջ եւ պիտի ենթարկուի ամբողջովին անտեսապէս՝ ու կիսովին քաղաքականապէս՝ ինչպէս Յունաստան՝ Ռուսիոյ ազդեցութեանը։ Իսկ եթէ յաղթող հանդիսանայ Պուլկարիա, այդ դարձեալ արգելք չպիտի ըլլայ Ռուսիոյ եւ Աւստրիոյ ծրագրին, որովհետեւ նախ՝ անոնք չպիտի թոյլ տան Պուլկարիոյ տիրանալու նոյն իսկ ափ մը հողի, ի հաշիւ Թուրքիոյ, յետոյ այսպիսի պիւրոսեան «յաղթութիւն» մը Պուլկարիան բոլորովին պիտի տըկարացնէ, որով մշանջենապէս չպիտի համարձակի ան պալքանեան թերակղզիի խաղաղութիւնը խանգարելու։ Ուրեմն, երկու պարագաներու մէջ ալ Ռուսիոյ, Աւստրիոյ եւ Գերմանիոյ համար Պալքանեան թերակղզիի մէջ արդասաբեր հունձք մը պիտի պատրաստուի։ Տկարացած Պուլկարիա եւ Թուրքիա անդառնալի կերպով պիտի նետուին յիշեալ տէրութիւններու գիրկը, եւ անոնց «պաշտպանութիւնը»՝ իրր տիտանական կափարիչ մը պիտի իջնայ Պալքանեան թերակղզիի վրայ, մինչեւ որ, է՛ն վերջը, մութ եւ փոթորկալից եւրոպական դիշեր մը՝ ռուսական, աւստրիական եւ գերմանական զօրքերը ոտք կոխեն խոստացուած եղերքը, — առաջինները՝ Վոփոր, երկրորդները՝ Անլանիկ, իսկ վերջինները՝ Փոքր Ասիա...։

թարգ. Շահպազ

Շարունակելի

10

ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻԻՆ ՄԷՋ

—o—

*Այս հարցումներուն իբր պատասխան՝ Բեթրսպուրկէն եւ Վիէնայէն կը ուզի Դիայն գիւային քրքիջ մը, որ պէտք է կերպով կը տարածուի Պալքանեան թերակղզիին վրայ եւ կը սառեցնէ ինչ որ կենդանի է։«...Եթէ ժողովուրդը՝ հակառակ կանխաւ եղած ազդարարութիւններու՝ չի յարգէ օրէնքը, ենթարկուի քմահաճութիւններու ազդեցութեան եւ ձեռնարկէ կռուի, այդ պիտի ըլլայ իր սեփական պատասխանատուութեան տակ եւ ոչ ոք պիտի արդիւք Թուրքիան, երբ այս վերջինս սկսի ոյժով խեղդել յեղափոխական շարժումը»։ *)*

Ի՞նչ կը նշանակէ այս բոլորը։

Ասիկա կը նշանակէ որ այսօր Ռուսիա, Աւստրիա եւ Գերմանիա ըմբռնած Ալլալով իրենց «բարենորոգումներուն» վերին ստիճանի անգործնականութիւնը եւ համոզուած ըլլալով միեւնոյն ատեն որ ատոնցմով չպիտի կրնան գոհացնել մակեդոնայի ժողովուրդը, կը թոյլատրեն Սուլթանին սուրով ու կրակով խեղդել ճնշուած ժողովուրդի դժգոհութիւնը. ասիկա կը նշանակէ թէ անոնք համաձայն են որ այս ժողովուրդը ջարդուի, կոտորուի եւ կախաղան հանուի, քանի որ չի կրնար անձայն տանիլ այն կողոպուտները, յափշտակութիւնները, որոնց ամէն օր ենթակայ է։ Ասիկա կը նշանակէ թէ անոնք առ այժմ որոշած են Թուրքիոյ ամբողջութիւնը եւ Պալքանեան թերակղզիի statu quo-ն ամէն «գնով» պահպանել։ Իսկ յայտնի է թէ Թուրքիոյ ամբողջութեան եւ Պալքանեան թերակղզիի խաղաղութեան էն մեծ եւ մշտական թշնամիները մակեդոնացի ժողովուրդը ու Պուլկարիան են։ Այս պատճառով Մակեդոնիոյ «բուն տարրերուն» զանգուածային ջարդը եւ Պուլկարիոյ ու Թուրքիոյ միջեւ պատերազմ մը՝ ամենէն ազգու եւ կրքուկ միջոցներն են այսօր Թուրքիոյ ամբողջութիւնը ու Պալքաններու խաղաղութիւնը պահպանելու համար։ Եթէ այս պատերազմին մէջ Թուրքիա յաղթէ, այդ սեւելի լաւ։ Այն ատեն Պուլկարիոյ վրայ պիտի ծանրանան այնպիսի պատերազմական տուգանքներ, որ անիկա մնանպամ ընդ միշտ ետ պիտի կենայ ամէն տեսակ նուաճողական ձգտումներէ Մակեդոնիոյ մէջ եւ պիտի ենթարկուի ամբողջովին անտեսապէս՝ ու կիսովին քաղաքականապէս՝ ինչպէս Յունաստան՝ Ռուսիոյ ազդեցութեանը։ Իսկ եթէ յաղթող հանդիսանայ Պուլկարիա, այդ դարձեալ արգելք չպիտի ըլլայ Ռուսիոյ եւ Աւստրիոյ ծրագրին, որովհետեւ նախ՝ անոնք չպիտի թոյլ տան Պուլկարիոյ տիրանալու նոյն իսկ ափ մը հողի, ի հաշիւ Թուրքիոյ, յետոյ այսպիսի պիւրոսեան «յաղթութիւն» մը Պուլկարիան բոլորովին պիտի տըկարացնէ, որով մշանջենապէս չպիտի համարձակի ան պալքանեան թերակղզիի խաղաղութիւնը խանգարելու։ Ուրեմն, երկու պարագաներու մէջ ալ Ռուսիոյ, Աւստրիոյ եւ Գերմանիոյ համար Պալքանեան թերակղզիի մէջ արդասաբեր հունձք մը պիտի պատրաստուի։ Տկարացած Պուլկարիա եւ Թուրքիա անդառնալի կերպով պիտի նետուին յիշեալ տէրութիւններու գիրկը, եւ անոնց «պաշտպանութիւնը»՝ իրր տիտանական կափարիչ մը պիտի իջնայ Պալքանեան թերակղզիի վրայ, մինչեւ որ, է՛ն վերջը, մութ եւ փոթորկալից եւրոպական դիշեր մը՝ ռուսական, աւստրիական եւ գերմանական զօրքերը ոտք կոխեն խոստացուած եղերքը, — առաջինները՝ Վոփոր, երկրորդները՝ Անլանիկ, իսկ վերջինները՝ Փոքր Ասիա...։

թարգ. Շահպազ

Շարունակելի

---

*) Տես «Fremdenblatt» լրագիրը եւ Ռուս կառավարութեան formulին՝ ռուս-աւստրիական ծանուցագրին համար՝ ըստ պուլկարական հեռագրական գործակալութեան։

միւս կողմէն, նոր կերպերու և անոնց հետ կապուած նոր պահանջներու, բարքերու և սովորութիւններու չափազանց դանդաղ ծագումը։ Այս բրօցէսին ուղղակի հետևանքն է մանր հողատէրերու և մանր արհեստաւորներու քայքայումը, և՛ մէկ կողմէն՝ խոշոր սեփականատէրերու ու քաբիդալիստներու, իսկ միւս կողմէն վարձկան բանւորներու առաջ գալը։

Հոս պէտք է յիշել հետևեալ երկու պարագաները, որոնք կը լրացնեն վերոյիշեալ բրօցէսը ու աւելի՝ կը դիւրացնեն՝ արդիւնաբերութեան հին՝ կերպերու՝ կործանումը։ Հարկային անտանելի սիստէմը, որ դրուեցաւ Հայաստանի բնակչութեան վրայ ռուս-տաճկական պատերազմէն, նա մանաւանդ Պուլկարիոյ ազատութենէն վերջը, երբ հարկատուներու շրջանակը սեղմուեցաւ, մինչդեռ տաճիկ պետութեան պէտքերը զգալաբար կը բազմապատկուէին — հարկային սիստէմ մը, որ բնականէն (en nature) դրամականի փոխուելով՝ գիւղական բնական արդիւնաբերութիւնն ալ անհրաժեշտօրէն ապրանքային արդիւնաբերութեան վերածեց։ Երկրորդ հանգամանքն է՝ եւրոպական դրամագլուխներու և ժամանակակից ապրանքներու մեծ քանակութեամբ ներմուծումը Հայաստան։

Այդ պարոնները չեն ըմբռներ այս բրօցէսը, այլ միայն կը տեսնեն տաճիկ պետութեան բաղմաբնակ զարհուրելի անբարոյականութիւնը ու ընթացքը, որուն հիմնական շարժառիթը յափշտակութիւնն է։ Մանր պուրժուազական խէօլօկը՝ արդիւնքը միայն կը տեսնայ, իսկ ոչ՝ ատոր ծընունդ տուող պատճառը։

Հայկական իրականութեան մակերեւոյթին տակ անոնք չեն տեսներ ու չեն ըմբռներ ուրոյն, հասարակական դասակարգերու կռիւը, որոնք, յիրաւի, դեռ առաջին շրջանին, իրենց սաղմնային վիճակին մէջ կը գտնուին։ Ահա անոնց այն առարկութիւնը, թէ հայ կեանքի մէջ հասարակական դասակարգերու շահերը և հետևաբար անոնց գործունէութիւնը ընդհանուր են, կապացուցանէ միայն թէ այս մարդիկ մանր-պուրժուազիայի ներկայացուցիչներ են և իբրև այդպիսիներ՝ իրենց դասակարգին մասնաւոր շահերը անգիտակցօրէն պաշտպանելու նկրտելով հանդերձ՝ զանոնք ամբողջ հայ ազգի շահերուն հետ կը նոյնացնեն։ «Մենք չենք ուզեր յայտնել հոս այն սահմանափակ կարծիքը թէ մանր-պուրժուազիան կը ձգտի առաջնութիւն տալ իր դասակարգային եսասիրական շահերուն, այլ ան կը կարծէ որ իր ազատագրութեան մասնաւոր պայմանները այն ընդհանուրական պայմաններն են, որոնց տակ միայն արդի ընկերութիւնը կրնայ ձեռք բերել իր փրկութիւնը և խոյս տալ դասակարգային կռիւէն։»*)

Այս է համ. ռօսական մանր-պուրժուազական հայ ցակէտը ժողովուրդներու հասարակա-տնտեսական կռիւներու նկատմամբ։

Այսպիսի մանր-պուրժուազական խէօլօկ է պ. Վարդօն։ Մեծ պատիւ ըրած պիտի ըլլայինք երբ, եթէ ցայն նոյնիսկ այսպիսիներու շարքը դասէինք։ Մանր-պուրժուազական ուղղութիւն կայ, մանր-պուրժուազական ուղղութիւն ալ կայ. բայց պ. Վարդօն այնքան փոքրիկ է, որ . . . յաւիտեանս յաւիտենից մանր-պուրժուազական գիխիկ մը պիտի մընայ, որուն մասնաւոր հարստութիւնը հայհոյանքէ ու շարլաթանութենէ անդին չանցնիր։

(Շարունակելի) Ա. Ցակոբեան

ՔՐՕՆԻԿ

Պուլկար կառավարութեան դիրքը Մակեդոնական խնդրին նկատմամբ կը շարունակէ անորոշ ու փոփոխական ըլլալ։

Մեր ընթերցողները գիտեն որ վերջերս Պուլկարիոյ ընթացքը բաւական շեշտակի ու սպառնական դոյն ստացած էր, և այդ փոփոխութիւնը բաւական յուսադրած էր մակեդոնական շրջանները։ Սակայն յուսախաբութիւնը մեծ եղաւ երբ վերջերս կառավարութիւնը թրքական սահմանագլխի վրայ գտնուող պուլկարական գաւառներու մէջ պատերազմական վիճակ հրատարակեց և այդ տեղերու իշխանութիւնը յանձնեց զինուորականներու, որպէսզի մակեդոնական հրոսակախմբերու Թուրքիա մտնելը բոլորովին արգիլուի։ Ինչպէս կերևի զինուորական իշխանութիւնը իրեն տրուած հրահանգները հաւատարմաբար գործադրելու համար ոևէ առիթ ձեռքէ չի փախցներ, որովհետև վերջերս սահմանագլխի վրայ պուլկարական զօրքերու և մակեդոնացի չէթեներուն մէջ ընդհարումներ տեղի ունեցած են։

Ցոյց տալու համար թէ պուլկար կառավարութիւնը նախագծուած որոշ քաղաքականութեան մը չի հետևիր երկիրը յուզող այս հրատապ խնդրին մէջ, բաւական է մատնանշել այն հանգամանքը, որ նախարարապետ Բէթրօֆ վերջերս օտար պետութիւններու ներկայացուցիչներուն, թէ գրաւոր և թէ բերանացի, բաւական խիստ ու սպառնական լեզու գործածելէն վերջը, հիմայ դարձեալ կը ջանայ ուղղակի Թուրքիոյ հետ համաձայնիլ և այդ նպատակով քանի մը ամիս առաջ սկսուած բանակցութիւնները յառաջ կը տարուին։ Պօլսոյ պուլկարական նոր դարձակատար — Թուրքիոյ և Պուլկարիոյ բարեկամութեան ամենամոլեռանդ պաշտպան — Նաչէվիչի միջոցաւ։

Մակեդոնական ապստամբութիւնը խեղդելու համար պուլկար կառավարութեան ձեռք առած միջոցները կապացուցանեն որ այս վերջինս այլ ևս իր շահերուն վնասակար կը նկատէ յեղափոխական շարժման շարունակութիւնը։ Մակեդոնացի յեղափոխականները «արիւնակիցս» ազատ Պուլկարիայէն շատ բան չեն կընար սպասել, որովհետև — ինչպէս որ արդէն անոնց մեծագոյն մասը նկատած է — պուլկարական կուսակցութիւնները մինչև հիմայ միայն իրենց կուսակցական շահերուն ծառայեցուցած են Մակեդոնիոյ ազատագրութեան գործը։ Եւ այդ իրողութեան հանդէպ Մակեդոնացի յեղափոխականներու ուրիշ բան չմնար ընելիք, բայց եթէ սիսթէմաթիք ու լուրջ յեղափոխական գործունէութեամբ մը եւրոպական միջամտութիւնը փութացնել, առանց յոյս դնելու օտար օժանդակութիւններու վրայ, որոնց մեծագոյն մասին նպատակն է պարզապէս չլսուել Մակեդոնիոյ մէջ մղուած յեղափոխական կռիւը։

— Անգլիա դարձեալ կրկին աւելի մօտէն շահագրգռուիլ Արևելեան խնդրով։ Ինչպէս արդէն յայտնի է, ան էր որ պահանջեց Մակեդոնիոյ համար պատրաստած բարենորոգումներու ծրագիրը ընդարձակել և վերջին ամիսները բաւական գործօն դեր ունեցաւ Մակեդոնական խնդրին առթիւ եւրոպական պետութիւններու միջև կատարուած բանակցութիւններու մէջ։

Հիմայ ալ թերթերը կը հաղորդեն որ Կ. Պօլսոյ անգլիական դեսպանը տուած է Թուրքիոյ ծանուցագիր մը, որով կը պահանջէ Պերլինի Դաշնագրին գործադրութիւնը, թէ Հայաստանի և թէ Մակեդոնիոյ մէջ։

Զկարծուի թէ անգլիական դիւանագիտութեան այս եռանդուն միջամտութիւնը Թուրքիոյ դրծերուն, ուէ մարդասիրական նկատումներով է։ Ան պարզապէս կուզէ օգտուիլ այն հանգամանքէն որ Ռուսիա զբաղած ըլլալով այսօր ծայրագոյն Արևելքի մէջ՝ անկարող է իրեն լուրջ արգելք մը ըլլալ Թուրքիոյ մէջ։

Թուրքիոյ լուծին տակ հեծող ժողովուրդները պէտք չէ որ անպայման հաւատք ունենան այս կամ այն տերութեան՝ Թուրքիոյ հանդէպ բռնած սպառնական ընթացքին վրայ, որովհետև միանգամ ընդ միշտ պէտք է գիտնալ որ իւրաքանչիւր պետութիւն իր քաղաքականութիւնը կը գծէ բացառապէս իր սեփական շահերուն վրայ։

Հետևաբար անգլիական դիւանագիտութեան նոր քայլը թող չյուսադրէ մեզի. բաւական է անցեալը աչքի առաջ բերել, համոզուելու համար որ ատոնք դիւանագիտական խաղեր են, որոնց արժէքը մանաւանդ մեզի շատ լաւ ծանօթ է։

— Ամիսներէ ի վեր է որ Իտալացի սոցիալիստները կը պատրաստուին արժանավայել ընդունելութիւն մը ընել ռուսական բռնապետութեան կուռքին՝ Ցարին՝ անոր Հռոմ ընելիք այցելութեան առթիւ։ Ինչպէս Ֆէրրին յայտարարած է, Իտալացի սոցիալիստները սուլելով Ցարը և ատոր դէմ ցոյցեր ընելով, ուրիշ նպատակ չունին, բայց եթէ բարձրել ռուսական բռնապետական կարգերուն և Ռուսիոյ մէջ ապրող ֆինլանտացի, հայ և ուրիշ ազգութիւններու իրաւունքներու բռնաբարումին դէմ։

Իտալիոյ մէջ սկսած այս շարժումը այնքան մեծ ծաւալ ստացած է ժողովրդական խաւերուն մէջ, որ Հռոմի ռուսական լրտեսախումբի մէկ տեղեկագրին վրայ՝ Ցարը անորոշ ժամանակով յետաձգած է իր այցելութիւնը Հռոմ, «իր կամքէն բոլորովին անկախ պատճառներով»։ — Ռուսական բէժիմի անարդ ծառաներուն տրուած այս փառաւոր ապտակը բարոյական մխիթարութիւն մըն է այն բազմաթիւ ռուս սոցիալիստներուն, որոնք կը հեծեն այսօր ռուսական խաւար բանտերու և Սիպերիոյ մէջ։

Սրբ

Կովկասեան բոլոր անցուդարձերու մասին մեզի ուղղուած ընդարձակ նկարագրութենէ մը — որոնց վրայօք գրուած է ժամանակին — կը քաղենք հետագայ տողերը։

. . . Թիֆլիսը պաշարման դրութեան մէջ է։ Համախմբումներ բոլորովին թոյլ չեն տրուիր։ Վաղը, կիրակէ, հաւանակաբար, վանքի բակը հաւաքելու թոյլ չպիտի տան, որովհետև ամէն կիրակէ մի թեթև բան լինում է։ Այժէն կողմ ձերբակալուածներ կան։

Թիֆլիսը իր դիրքի համեմատ դեր չխաղաց։ Ժողովներ կազմելուց, գրգռելուց յետոյ «ազգային ինքնապաշտպանութեան կոմիտէ» կազմուեց, որի գործը եղաւ մի քանի թռուցիկներ բաց թողնել. . . : Բանուորական կուսակցութիւնը օգտուելով դէպքից և հայ ժողովրդի համակրութիւնը շահելու համար աւելի ակտիվ գործունէութեամբ ասպարէզ եկաւ։ Սա էլ հրատարակեց թռուցիկներ և անցեալ կիրակէ օրուայ ցոյցին մասնակցող կուռողներ տուեց։

Ներսիսեան դպրոցի հաշիւները և դրամարկղը շատ անցուդարձից յետոյ, շնորհիւ աստիճանաւորների մեքենայութեան և իշխանութեան ամենախիստ հրամաններին՝ յանձնուեցին։ Իւրաքանչիւր եկեղեցի կամ հիմնարկութիւն, որտեղ այդ տեսակ գործողութիւն պիտի կատարուի, օրերով պոլիցիայով և կազակներով պաշարուած դրութեան մէջ է լինում։ Լրտեսութիւնը չափազանց զարգացել է։ Մի քանի տեղօր են կատարել կարսում, Ալեքսանդրապոլում. . . : Կովկասցի

Վերջին պահուն խմբագրութեանս հասած կրկին հեռագիրներ կը հաղորդեն որ, երէկ, ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԲԷԿի վրայ սպանութեան փորձ մը կատարուած է։

Վէրքը ծանր, է բայց ոչ վտանգաւոր։

Այդ հրէշային արարքի ստորաքարշ հեղինակները հասարակաց անողոք դատաստանին յանձնելով՝ կը փութանք այս առթիւ մեր ջերմ համակրութիւնը յայտնել մեր թանկագին ընկերին, որուն շուտափոյթ ապաքինման ի սրտէ կը ցանկան իր բազմաթիւ համակրողները։

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Печатница Б. Н. Малджиевъ — Русе.

---

*) К. Марксъ „Осемнадесети брюмеръ на Луй Бонапартъ“.